Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն
2026, Vol. 17, No. 2 (50), հունիս, 131-141
https://doi.org/10.46991/BYSU.B/2026.17.2.131

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԻՐԱՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ «ԴԻՄԵԼԱՁԵՎ – ԿՈՉՈՒՄ – ՏԻՏՂՈՍ» ԻՄԱՍՏԱՅԻՆ ԽՄԲԻ ՈՐՈՇ ՀԱՏԿԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՍԻԼՎԱ ՊԱՊԻԿՅԱՆ*
ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

Հատկական փոխառություններին հայ լեզվաբանության մեջ քիչ են անդրադարձել: Անվանում են նաև *օտար բառեր, տարաշխարհիկ բառեր, էկզոտիզմներ*: Հատկական փոխառությունները սովորաբար գործածվում են, երբ խոսքը վերաբերում է որևէ ժողովրդին բնորոշ իրույթներին (ռեալիաներ) առնչվող նրա պատմությանը, աշխարհագրությանը, սովորույթներին: Հիմնականում հանդիպում են թարգմանական գրականության մեջ, մամուլում կամ տվյալ ժողովրդին առնչվող գործերում՝ պատմական երկ, դասագիրք և այլն: Այս փոխառությունները կարելի դասակարգել ըստ տարբեր հատկանիշների՝ ծագման, իմաստային խմբերի, հաճախականության, ժամանակային հատկանիշի և այլն:

Ընդհանուր հատկական փոխառությունների մեջ մեծ թիվ ունեցող «դիմելաձև- կոչում- տիտղոս» իմաստային խմբի բառերը հայերենին անցել են տարբեր լեզուներից՝ ռուսերենից, թուրքերենից, իրանական լեզուներից, արաբերենից, եվրոպական լեզուներից: Հոդվածում առաջին անգամ դիտարկվում են իրանական լեզուներից հայերենին անցած որոշակի հաճախականություն ունեցող «դիմելաձև – կոչում - տիտղոս» իմաստային խմբի հատկական փոխառությունները:

Բանալի բառեր – *հատկական փոխառություն, իրույթ, թարգմանական գրականություն, իրանական լեզուներ, միջազգային բառեր*

* **Սիլվա Պապիկյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող
Сильва Папикян – кандидат филологических наук, доцент, старший научный сотрудник Института языка им. Р. Ачаряна НАН РА
Silva Papikyan – Candidate of Philological Sciences, Associate Professor, Senior Researcher at the Institute of Language after H.Acharyan of the NAS of the RA
Էլ. փոստ՝ silvapapikyan23@gmail.com ORCID ID:https://orcid.org/0009-0009-4282-7499

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 19.05.2026
Գրախոսվել է՝ 25.05.2026
Հաստատվել է՝ 09.06.2026
© The Author(s) 2026

Ներածություն

Ընդհանուր փոխառությունների մեջ առանձնանում են հատկական փոխառությունները[1] (էկզոտիզմներ, տարաշխարհիկ բառեր, օտար բառեր): *Հատկական փոխառություն - օտար բառեր - տարաշխարհիկ բառեր*[2] *- էկզոտիզմ* բառերը հոմանիշային շարքի անդամներ են, որոնցից *էկզոտիզմ*-ը միջազգային բառ է: Եթե ընդհանուր բառապաշարին հատուկ են տարբեր հարաբերություններ նշանի և նշանակելիի միջև (բազմիմաստություն, համանունություն, հոմանիշություն), ապա տերմինագիտության մեջ ընդունված է հետևյալ սկզբունքը՝ տվյալ տերմինահամակարգում մեկ տերմինին՝ մեկ իմաստ (Աղայան, 355): Կարծում ենք՝ *հատկական փոխառություն*[3] տերմինը պատճառաբանված է և լիովին բացահայտում է նրա հիմքում ընկած հասկացության իմաստը. այն նաև լեզվաբանական տերմինահամակարգում մենիմաստ է:

Ի տարբերություն սովորական փոխառությունների, որ փոխառու լեզուն վերցնում է այլ լեզվից՝ նոր առարկան, հասկացությունը արտահայտելու համար, հատկական փոխառությունները, արտացոլելով օտար երկրին, մշակույթին հատուկ երևույթներ, հիմնականում անթարգմանելի են և չունեն հոմանիշներ, ինչպես սանսկրիտից՝ *գուրու*, պարսկերենից՝ *շահիդ*, ռուսերենից՝ *բուռլակ* և այլն: Դրանք բառապաշարի ոչ գործուն շերտին են պատկանում: Այս փոխառությունների միջոցով որոշակիորեն արտահայտվում են նաև հեղինակի հուզական-զգացական վերաբերմունքը տվյալ առարկայի, երևույթի նկատմամբ, ինչպես նաև պատմական ժամանակաշրջանի, միջավայրի, իրադարձության մասին պատկերացումները: Հատկական փոխառությունները մտնում են այլ լեզուների բառապաշար, որի լեզվակիր հանրույթը կարող է ծանոթ չլինել փոխատու ժողովրդի մշակույթին, սովորություններին, հոգեկերտվածքին. հիմնականում դա տեղի է ունենում թարգմանական գրականության և զանգվածային լրատվության միջոցներով: Դրանց մի մասը ձեռք է բերում միջազգային տարածում**,** որոնք կարող են համալրել տերմինների շարքերը, հմմտ. *ցունամի (*ճապ.), *տորնադո* (իսպ.) և այլն: Որոշ դեպքերում դժվար է որոշել հատկական փոխառությունների և տերմինների սահմանները:

Հատկական փոխառությունները կարելի է դիտարկել ըստ ծագման, ըստ իմաստային խմբերի, ըստ բառիմաստի փոփոխության, ըստ հաճախականության, ըստ ժամանակային հատկանիշի և այլն: Ըստ իմաստային խմբերի՝ ընդունված են *դիմելաձև – կոչում - տիտղոս, կրոնական բառեր, սպորտաձև,*

---

[1] Այս տերմինը շրջանառության մեջ է դրել Էդ. Աղայանը (տե՛ս **Աղայան Էդ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևանի համալսարանի հրատ. , Եր., 1984, էջ 169):

[2] *Տարաշխարհիկ բառեր* տերմինը գործածում է Ֆ. Խլղաթյանը (տե՛ս **Խլղաթյան Ֆ. ,** Ժամանակակից հայոց լեզու, «Զանգակ» հրատ., Եր., 2009, էջ 192, **նույնի՝** Ժամանակակից հայոց լեզու, Եր., 2009, էջ 193, **նույնի՝** Ռճաբանական տերմինների բառարան-տեղեկատու, Եր. , 1976, էջ 104:

[3] Տե՛ս **Պապիկյան Ս**., Դիտարկումներ «հատկական փոխառություն» տերմինի մասին / Բառագիտության արդի խնդիրներ (հանրապետական գիտաժողով), Եր., 2025, էջ 89 -95:

դրամական միավորների անվանումներ, հագուստ, ազգային պարեր, գրական ժանրեր, կերակրատեսակներ, խմիչք, կացարան, զենք-զինատեսակ և այլ խմբեր: Այս դասակարգումները կարելի է շարունակել՝ ընդունելով, որ ցանկացած դասակարգում որոշակի պայմանականություն ունի:

Որևէ ժողովրդի պատմությունը ուսումնասիրելու կարևորագույն աղբյուր է նրա լեզուն, հատկապես բառապաշարը, որում արտացոլված են տվյալ ժողովրդի կյանքի բոլոր բնագավառները, միևնույն ժամանակ երևում են տվյալ էթնոսի պատմամշակութային կապերը ուրիշ ժողովուրդների հետ: Վ. Աբաևի կարծիքով՝ ժողովրդի և նրա լեզվի պատմությունը կարելի է դիտարկել երկու տեսանկյունից՝ 1. լեզվի պատմությունից գնալ ժողովրդի պատմություն, 2. ժողովրդի պատմությունից գնալ լեզվի պատմություն՝ օգտագործելով ազգային պատմության տվյալները՝ բացատրելու փաստերը, գործընթացները, որ կատարվում են լեզվում[4]:

Հոդվածում դիտարկելու ենք «դիմելաձև – կոչում - տիտղոս» իմաստային խմբի՝ իրանական լեզուներից հայերենին անցած որոշակի հաճախականություն ունեցող բառերը:

Հայտնի է, որ հայերենը ամենաշատ փոխառություններ կատարել է իրանական լեզուներից: Երկարամյա հարևանությունը, մշակութային, առևտրական և քաղաքական սերտ առնչություններն ունեցել են իրենց ազդեցությունը լեզվի վրա: Հայերենի 1400-ից ավելի իրանական փոխառությունները, որ կատարվել են և՛ գրավոր, և՛ բանավոր ճանապարհով, վերաբերում են կյանքի բոլոր բնագավառներին՝ բնություն, գույներ, երկրագործություն, գիտություն, արվեստ, վաճառականություն և այլն: Հատկապես շատ են միջին պարսկերենից (մ.թ.ա. 4-րդ դարից մինչև մ.թ. 10-րդ դ.) կատարված փոխառությունները:

Հասարակության մեջ տեղի ունեցող ամեն փոփոխություն իր արտահայտությունն է գտնում տվյալ լեզվի բառապաշարում: Յուրաքանչյուր իշխող ժողովուրդ իր տիրապետության տակ գտնվող երկրներում քաղաքական, վարչատարածքային իր կառուցվածքներն է ներդնում, որի հետևանքով բազմաթիվ բառեր ներթափանցում և ամրակայվում են փոխառու լեզվում, իմաստային փոփոխությունների ենթարկվում:

«Դիմելաձև – կոչում - տիտղոս» իմաստային խմբի հատկական փոխառությունների թիվը ընդհանուր հատկական փոխառությունների մեջ մեծ է: Այս խմբի՝ իրանական ծագման բառերը հավաքել ենք տարբեր աղբյուրներից: Չենք առանձնացրել *դիմելաձև, կոչում, տիտղոս* խմբերը, քանի որ հաճախ դրանք համընկնում են:

Յուրաքանչյուր ժողովրդի համար կարևոր է իր ազգի ազնվականական դասի աստիճանակարգությունը՝ հիերարխիան: 5-րդ դարի հայ պատմիչ Մով-

[4] Տե՛ս **Абаев В.И.**, О принципах этимологического словаря // Вопросы языкознания, 1952, № 5, էջ 56-69:

սես Խորենացու «Հայոց պատմություն» աշխատությունում տրված է հայոց նախարարների գահերի դասավորությունը, որ ներկայացված է *Գահնամակում*՝ «գահերի տեղերի թուղթ»[5]: *Գահնամակ* բառը հայերենին անցել է միջին պարսկերենից: Գահնամակը պահպանված է մինչև այժմ: Լավագույն ընթերցումը Նիկողայոս Ադոնցինն է[6]:

Դիտարկել ենք հետևյալ բառերը:

Բդեշխ < պարսկ. bitaxš. «1.պատմ. Հին Հայաստանում՝ 4 մեծ նախարարությունների պետեր սահմանգլուխների վրա, որոնք բոլոր նախարարներից ավագ էին և ավելի անկախ (Աղձնյաց, Գուգարաց, Նորշիրական, Վրաց, 2. Հյուպատոս» (ԱՀԲԲ, 184)[7]: Արտաշեսյան և Արշակունի թագավորների ժամանակ (մ.թ.ա. 2 - մ.թ. 5-րդ դդ.) գոյություն են ունեցել Աղձնիքի, Կորդուքի, Նոր Շիրականի և Գուգարաց բդեշխությունները[8]:

Հայաստանում բդեշխները նախարարներից բարձր կալվածատեր ազնվականներ էին, մի տեսակ մանր թագավորներ՝ իրենց թագավորություններով: Սրանք Տիգրան Մեծի ժամանակ ճանաչեցին Արշակունի թագավորների գերիշխանությունը (Խորենացի, 472, ծան. 76): Հայաստանում բդեշխությունները վերացել են Արշակունիների թագավորության անկումից հետո՝ 428 թ.:

Օրինակներ[9]. «Սրանցից մեկին, այն է Սանասարին, մեր քաջ նախնի Սկայորդին բնակեցնում է նույն Ասորեստանի սահմանների մոտ, մեր աշխարհի արևմտյան հարավում»: «….Որովհետև երբ երանելի Տրդատը վախճանվեց, Բակուր մեծ իշխանը, որ կոչվում էր Աղձնիքի *բդեշխ*, տեսնելով որ Սանատրուկը թագավորեց Փայտակարանում, նույնը կամեցավ և ինքն անել, սակայն չթագավորել, որովհետև Արշակունի չէր, այլ կամեցավ ինքնագլուխ լինել: Ուստի Հայոց միաբանությունից անջատվելով՝ ձեռքը մեկնեց Պարսից Որմիզդ թագավորին» (Խորենացի, 85):

---

[5] **Մովսես Խորենացի,** Հայոց պատմություն (ներածությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի), Երևանի համալսարանի հրատ., Եր., 1981, էջ 529-530:

[6] Տե՛ս **Адонц Н.**, Армения в эпоху Юстиниана: Политическое состояние на основе нахарарскаго строя. СПб., типография Императорской Академии Наук, 1908, էջ 249-250: Հուստինիանոս կայսեր օրոք Հայաստանը բաժանվեց Բյուզանդական կայսրության և Սասանյան Իրանի միջև և դարձավ հակամարտության ասպարեզ: Հայաստանի մեկ հինգերորդ մասը դարձավ Բյուզանդական կայսրության նահանգ, իսկ Հայաստանի արևելյան մասը (Մեծ Հայք) մնաց Իրանի թագավորների անվանական տիրապետության տակ: Հայաստանի այն շրջանները, որոնք բաժանումից հետո պահպանեցին նախարարական համակարգը, կարողացան պահպանել իրենց սոցիալ-քաղաքական և կրոնական-մշակութային անկախությունը:

[7] **Աղայան Էդ.** , Արդի հայերենի բացատրական բառարան (այսուհետև՝ ԱՀԲԲ), «Հայաստան» հրատ., Եր., 1976:

[8] Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան (այսուհետև՝ ՀՍՀ), ՀՍՍՌ պետհրատ, հ. 2, Եր., 1976, էջ 349:

[9] Օրինակները բնագրային են կամ բերված են «Արևակ» արևելահայերենի կորպուսից՝ http://net/EANC/search/?interface_language=am (կորպուսից բերված օրինակների դեպքում փակագծերում տրվում են հեղինակն ու գրքի վերնագիրը: Մնացած տվյալները կարելի է գտնել կայքէջում):

Խոջա <պարսկ. xoǧa՝ «մեծ, ուսուցիչ»: Ստ. Մալխասյանցի ՀԲԲ-ում[10] *խոջա* բառի բացատրությունը հղվում է *խօջա/խօջայ*/-ին, որը բազմիմաստ է՝ *մեծ, տարիքն առած, խոշոր, թուրք կամ պարսիկ ուսուցիչ, մոլլա Նասրեդդինի մակդիրը, հայ վաճառական (Զուղայի, Ագուլիսի)*:

Հայերենում այս արմատով կազմվել են *խոջայական*՝ «խոջային հատուկ», և *խոջայութիւն* ՝«խոջաների դասը», բառերը: «Հայոց լեզվի բարբառային բառարանում»[11] *խոջա* բառի բացատրությունը հղվում է *դոջա*-ին: Բարբառներում *դոջա*-ն ունի «մեծ» նշանակությունը՝ *դոջա մարդ, դոջա տղա*: *Խոջա*-ն՝ որպես մոլլա Նասրեդդինի մակդիր, կարող էր գործածվել առանձին, ինչպես՝ «Խոջայի առակներից ասաց»:

Բերենք օրինակներ՝ «Օ՛, բարի խոջա, քնքուշ, սիրալիր,/ Վտանգավոր է ճամփան, ետ դարձիր»[12]: «1651-1653 թթ. Մոծակ մականունով *Խոջա* Գրիգորը Գետառից խմելու ջուր է բերում Կաթողիկե եկեղեցու բակը և դրա շրջակայքի թաղամասերը» (Թ. Հակոբյան, Երևանի պատմություն, 1971):

Միրզա < պարսկ. *mīrzā, mīrzāde* «1. Իշխանածին, թագավորազն: 2. Ազնվատոհմ: 3. Հարգական տիտղոս՝ կրթված մարդուն դիմելիս» (ՀԲԲ, 3, 340): Ըստ Աղայանի՝ «1. Թագավորական տան արական անդամների տիտղոս Իրանում: 2. գվռ. Տղամարդու, հատկապես ուսյալ կամ բարձրատիճան մարդու պատվավոր տիտղոս» (ԱՀԲԲ,1017):

Հայերենում *միրզա* բառը կարող է դառնալ ազգանվան վերադիր՝ նշելով ազգանվանակրի ազնվական ծագումը, ինչպես՝ Միրզա-Ավագյան, Միրզա-Հովհաննիսյան (գրվում է գծիկով). որոշ դեպքերում *միրզա* բաղադրիչը դառնում է ազգանվան մաս և գրվում միասին, ինչպես՝ Միրզաբեկյան, Միրզախանյան և այլն: Օրինակներ՝ «Երեք օր Միրզա Շաֆիրը դուրս չեկավ տնից, և երեք օր արևելյան հին քաղաքում ոչ մի խանութ չբացվեց (Գարեգին Բես, Նովել-ներ): «Նրա փեսացուն հանցանքի մեջ բռնվել է և կախաղանի է դատապարտվել, և *միրզա* Ֆարմասոնի մատը կա ոճրագործության մեջ» (Պ. Պռոշյան, «Պատմվածքներ): *Միրզա* բառը գործածական էր նախախորհրդային շրջանի հեղինակների ստեղծագործություններում:

Շահ < պարսկ. šāh՝ «թագավոր»: Ընդհանուր անուն Պարսկաստանի թագավորների» (ՀԲԲ, 3, 492): Առաջին անգամ *շահ* և ապա *շահնշահ* (արքայից արքա) տիտղոսն օգտագործվել է Իրանում, Սասանյանների տիրապետության ժամանակ և պահպանվել մինչև 1979 թ. փետրվարը, երբ գահընկեց արվեց շահ Մոհամմադ Ռեզա Փահլավին (ՀՍՀ, հ. 8, 1982):

---

[10] **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), ՀՍՍՌ պետհրատ, Եր., 1944-45, էջ 312:

[11] Բարբառներում հանդիպում են «ɬoǧa (*դոջա),* ɬoča *(դոճա(*», «հարուստ, ուսուցիչ, զվարճախոս (մարդ)» «*դոչա*» 1. Մեծ, աժդահա՝ *դոչա քար*, 2. Առաջացած տարիքով, ծեր» իմաստներով: **Հայոց լեզվի բարբառային բառարան** (այսուհետև՝ ՀԼԲԲ), «Գիտություն» հրատ, հ. 3, 2004, Էջ 355-356:

[12] **Գյանջևի Նիզամի**, Լեյլի և Մեջնուն (այսուհետև՝ ԼՄ), Եր., 1947, էջ 235: Պոեմում բառը գործածված է «ուսուցիչ, հոգևորական» իմաստով:

Ինչպես նախորդ՝ *միրզա*, այնպես էլ *շահ* բառով կարող են հայերենում բաղադրվել անուններ և ազգանուններ. հմմտ. *Շահ Աբաս,* ազգանուններ՝ *Շահնազարյան, Շահխաթունի, Շահմուրադյան, Շահսուվարյան, Շահվերդյան* և այլն: Համաշխարհային գլուխգործոց է Ֆիրդուսիի «Շահնամե» (Գիրք թագավորաց) ստեղծագործությունը՝ կազմված *շահ* բառով: Ինչպես հայտնի է, *շահ* – ով է կազմված *շահմատ* բառը, որ նշանակում է «թագավորը մեռավ»:

Պարսկերեն *շահ* բառը համանունական շարք է կազմում *շահ*՝ «օգուտ, պարտք տրված փողի կամ մթերքի համար ստացվող տոկոս, այն ինչ համապատասխանում է մեկի ձգտումներին՝ անձնական բարեկեցության պաշտոնական նկատառումներին և այլն» բառի հետ (ԱՀԲԲ, 1093): *Շահ* բառը փոխառությամբ անցել է աշխարհի շատ լեզուների և պատկանում է միջազգային բառերի շերտին:

Շահիդ <պարսկ. šāh՝ *տիրակալ* բառից է (կրոն.): Մահմեդականների մոտ՝ հանուն Ալլահի իրեն զոհաբերելու ընդունակ անձ: Լայն իմաստով՝ գործածում են «*նվիրյալ, մահապարտ*» իմաստով:

Օր.՝ «Համենայն դեպս կարելի է չկասկածել, թե ում դեմ կգործի իրանական «մահապարտների գումարտակը», որի կազմի մեջ ընդգրկված է.... 56 հազար իսլամական ռազմիկ, իսկ ավելի պարզ ասած՝ *շահիդ*» («Ազգ» (շաբաթաթերթ), 2007.03.02): «Իզուր կկոտորվեք, ձեր երեխեքն ու կանայք որը կմնան, մի հավատաք ձեր շեյխին, որ ձեզ քարոզում է, թե դուք կռվում եք «սուրբ հավատի համար» և *շահիդ* եք գնում, որ ջեննեթ երթաք» (Հարություն Մկրտչյան, Պատմվածքներ):

Շահիդ բառն արձանագրված չէ ՀԲԲ-ում և ԱՀԲԲ-ում: Ա. Հայրապետյանի ՕԲԲ-ում[13] ներկայացված է *շահիդ* տարբերակով, հավանաբար՝ ռուսերենից:

Այժմ գործածական է «շահիդի գոտի» («մահապարտի գոտի») արտահայտությունը: Սա ինքնագործ պայթուցիկ սարք է, որը մահապարտ-ահաբեկիչը կրում է մարմնի վրա հագուստի տակից՝ ահաբեկչություն իրականացնելու նպատակով: Այժմ կան «Շահիդ» անվանումով հրթիռներ:

Շահնա < պարսկ. šahna (*սկզբնապես՝ ցեղապետերին տրվող տիտղոս*): Բառը հայերենում բազմիմաստ է. «1. Թագավորի կողմից նշանակված վերակացու՝ քաղաքում կարգ պահպանելու համար, ոստիկան: 2. Թաթարական տիրապետության շրջանում՝ վարչական և հարկահան պաշտոնյա: 3. Թուրքիայում՝ գյուղերի հարկերը բնատուրքով գանձող կապալառու» (ՀԲԲ, 3, 494): ԱՀԲԲ-ում՝ պատմ. նշումով է՝ *տասնորդահավաք, հարկահան*:

Օր.՝ «Երբ *շահնան* լսեց այդ՝ անմիջապես / Ֆշշաց վրիժոտ շահմար օձի պես» (ԼՄ, 46):

---

[13] **Հայրապետյան Ա.**, Օտար բառերի բառարան (այսուհետև՝ ՕԲԲ), Եր., հեղ. հրատ., 2011, էջ 396:

Շահնշահ < պարսկ. *šah* - ից. šāhānšāh՝ «թագավորների թագավոր, արքայից արքա, որին հպատակվում են ուրիշ թագավորներ, պարսից թագավորների տիտղոս» (ՀԲԲ, 3, 494):

Օրինակներ՝ «Բարի մարդ, դու իմ նոր ծանոթ,/ Դեռ ինձ չեն գերել կրքերն հիվանդոտ,/ Ես շահնշահ եմ, թեև վշտալից,/ Եվ չեմ ամաչում ինքս ինձանից» (ԼՄ, 338):

«1236 թ. հունիսին մոնղոլական բանակը Չաղատա Նուինի գլխավորությամբ գրավեց և հիմնահատակ ավերեց քաղաքը, կողոպտեց *շահնշահ* Զաքարյանի գանձերը, ավերեց Դավիթ Անհողինի կնոջը վերագրվող մատուռ-դամբարանը» (ՀՍՀ, հ. 8, 1982): Բառն ունի սահմանափակ գործածություն:

Սարդար < պարսկ. sardār՝ *զորագլուխ*: «1. Պարսկական զորքի զորավար: 2. Պարսկական տիրապետության ժամանակ պարսից շահի կողմից Երևանի նահանգում նշանակված կուսակալ» (ՀԲԲ, 4, 192): Օրինակներ՝ «Ամեն անգամ, երբ փաշայի դուռն է գնում, կարծես մի մեծ *սարդար* լինի, մի խումբ ձիավոր ետևից, մի խումբ ձիավոր առջևից, փողոցներում տեղ չէ մնում, որ անցնեն» (Րաֆֆի, Կայծեր): «*Սարդար* Մահմուդ խանի տան վրա հարձակվելիս նա կոանով բաց էր արել վագրի սենյակը, կարծելով, թե այնտեղ գանձեր կան» (Գարեգին Սևունց, Թեհրան):

Հայերենում կան *Սարդար* անձնանուն, *Սարդարյան* ազգանուն: *Սարդար* անունով գյուղ է եղել Արևմտյան Հայաստանի Մուշի գավառում, *Սարդարա*՝ գյուղ Պարսկահայաստանում, *Սարդարաշեն*՝ Արցախի Ասկերանի շրջանում՝ Ստեփանակերտից 20 կմ հարավ-արևմուտք, *Սարդարապատ*: *Սարդարապատ* տեղանունը ունի *Սարդարաբադ* տարբերակը:

Սեպուհ < միջ. պարսկ. vispuhr, ավեստ. vīsōpuθra՝ «տան որդի»՝ «1. պատմ. Հին Հայաստանում՝ նախարարական տոհմից սերած ազնվական, 2. Ընդհանրապես ազնվական ծագում ունեցող անձ, ազատ: 3. ած. Սեպուհներից կազմված՝ բաղկացած՝ սեպուհ գունդ: 4. Փխբ. Առաջին, առաջնակարգ՝ գերադաս՝ *սեպուհ դեսպան, սեպուհ պարտք* (ԱՀԲԲ, 1291):

Օրինակներ՝ «Երկու օր անց Վրաց թագավորը նամակ տվեց *սեպուհ* դեսպանին՝ Վարդանին ուղղած» (Դ. Դեմիրճյան, Վարդանանք): Բառն այստեղ ունի փոխաբերական նշանակություն՝ «գերադաս, գլխավոր»: «Իշխան, *սեպուհ* զենք-զրահով շողշողում են, ու կրկին/Հնչում են երգ, վին ու փանդիռ, աղջիկներն են կաքավում... Անրջանքից հիանում ես, արթանցումից ես ցավում» (Պ. Սևակ, Պոեմներ): «Մի փոքր հեռու գնա՛, տե՛ր սեպուհ, դեպի Երվանդունիք, այնտեղ կտեսնես նրա ձիաների, ջորիների և ավանակների երամակները և կհիանաս նրանց վրա նայելիս» (Րաֆֆի, Սամվել):

Արևմտյան Հայաստանում կա լեռ *Սեպուհ* անվանումով՝ «Արևը ծանրացել էր Սեպուհ լեռան ուսին, և արյուն էր ծորում հորիզոնի վրա» (Բ. Վերդյան, Ծաղիկներս մնացին հեռվում):

Սեպուհ-ը բառիմաստի նեղացումով՝ տղամարդու հատուկ անուն է՝ «Մելգոնեանի վաստակաշատ ուսուցիչ պրն. Սեպուհ Աբգարեանի առաջնորդութեամբ կ՚աշխատինք երգել Տէրունական աղօթքը….» (Ազգ, 2008.05.03): *Սեպուհ* արմատից հայերենում բաղադրված են *սեպուհական* (որից առաջացել է *սեփական* բառը), *սեպուհություն, սեպուհուհի* ՝ «1. կին սեպուհ, 2. սեպուհի կին» բառերը:

Վզուրկ/վզրուկ < պարսկ. buzurg՝ միջ. պարսկ. vuzurg՝ «մեծ»՝ պատվանուն հին Պարսկաստանում» (Միհրներսեհի տիտղոսը միջին պարսկերեն, որ թարգմանվել է հայերեն *մեծ*՝ Միհրներսեհի *մեծ* հազարապետ) (ՀԲԲ): Եղիշեի «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» երկում Միհրներսեհի նամակի վերնագիրը կրում է նրա տիտղոսը՝ Վզուրկ հրամանատար Երան և Աներան», որ հայոց պատասխանում արտահայտված է արդեն հայերեն բառերով «մեծի հազարապետիդ Արեաց և Անարեաց»[14]: Մեկ այլ օրինակ՝ «Եւ ամենայն վզրուկքն և պատուական նախարարքն... ամաչացեալ կորանային և ընդ երկիր պշնուին» (Եղիշէ, 88):

Փադիշահ /փատիշահ < պարսկ. patishah՝ pati – տեր, պարոն + shah – շահ (ՕԲԲ, 589): «պատմ. Մերձավոր և Միջին Արևելքի պետությունների միապետները և նրանց տրվող տիտղոսները», հատկապես՝ պարսկական և օսմանյան թագավորներ: Հայերենում հանդիպում է նաև փատիշահ տարբերակը: ՀԲԲում *Փադիշահ* գլխաբառի բացատրությունը հղում է *Փատիշահ* -ին հետևյալ բացատրությամբ՝ *ընդհանրապես թագավոր, մասնավորապես՝ պարսից և օսմանցոց թագավորներ* (ՀԲԲ, 4, 490): ՀԱԲ-ում *փադիշահ* տարբերակը չի արձանագրված, այլ *փատիշահ* է, որն էլ հղված է *փաթշահ* տարբերակին՝ «թագավոր» նշանակությամբ: Ըստ Աճառյանի՝ պարսկերեն pādšāh կամ pādišāh բառերում *թ*-ն առաջացել է հաջորդ *շ*-ի ազդեցությամբ (ՀԱԲ, 4, 469):

Օրինակներ՝ «Մի անգամ փադիշահ Ակբարին ներկայացավ մի ոմն վաճառական և բերեց ազնվարյուն, արագավազ արաբական նժույգների մի ամբողջ երամակ» («Երեկոյան Երևան» (օրաթերթ), 1964.04.11):

Ժամանակակից պարսկահայ բանաստեղծուհի Վիոլետ Գրիգորյանը շատ հմտորեն գործածել է իրանական ծագման կոչում-տիտղոսներն իր մի պոեմում՝ «Բազմի՛ր գահիդ, իմ փադիշահ, ծոցիս շահիդ, գոգիս փաշա, շահինշահն ես այս գիշերվա, ա՛խ, մաշշալլա՛հ....» (Վիոլետ Գրիգորյան, Հարեմի վարդ, 2005):

Ժողովրդախոսակցական լեզվում գերիշխում է փադիշահ տարբերակը:

---

[14] Հայտնի է, որ հույները բարբարոսներ էին անվանում օտար ազգերին: Պարսիկներն օտարներին անվանում էին *անարիներ*՝ ոչ արիներ, իրանցիներ և ոչ իրանցիներ: *Երան և աներան* արտահայտությունը նշանակում էր Իրան և Ոչ-Իրան (տե՛ս **Եղիշե,** Վարդանի և հայոց պատերազմի մասին, «Հայաստան» հրատ., Եր., 1971, էջ 190, ծան. 18):

Ֆառաշ <պարսկ. farrāš՝ «պալատի ստորին պաշտոնյա, 2. Պարսիկ իշխանավորի տրամադրության տակ ծառա, որ նրա պատվերները կատարում է» (ՀԲԲ, 4, 623):

Օրինակները, ըստ «Արևակ» արևելահայերենի կորպուսի, հիմնականում Խ. Աբովյանի ստեղծագործություններից են:

Էսքան մեծամեծ մարդիկ՝ խաներ, բեկեր, աղեք, ֆառաշ, մոլլա, ախունդ, էս ի՞նչ են էստեղ կանգնել, հավաքվել, չե՞ս ուզում դու էլ մի աչքդ քցես, նայե՞ս» (Խ. Աբովյան.Վերք հայաստանի, 1841):

Մեկ այլ օրինակ՝

Տեր աղվեսին ասավ,
Ֆառաշ չի՞ պետքը, որ հարկն հավաքի,
Էդ գործն էլ թո՛ղ դու՝ իմ վզիս ըլի,
Բանը թամամեց (Խ.Աբովյան, Պարապ վախտի խաղալիք, 1841):

Բերենք վերոնշյալ բառերի քանակը ըստ «Արևակ» արևելահայերենի կորպուսի. բդեշխ՝ 49 համատեքստ, 21 տեքստ, խոջա՝ 656 համատեքստ, 86 տեքստ, մարզպան՝ 282 համատեքստ, 10 տեքստ, միրզա՝ 667 համատեքստ, 125 տեքստ, շահ՝ 3009 համատեքստ, 1192 տեքստ, շահիդ՝ 14 համատեքստ, 10 տեքստ, շահնա՝ 8 համատեքստ, 5 տեքստ, շահնշահ՝ 67 համատեքստ, 25 տեքստ, սարդար՝ 168 համատեքստ, 76 տեքստ, սեպուհ՝ 692 համատեքստ, 235 տեքստ, վզուրկ/վզրուկ՝ 2 համատեքստ, 2 տեքստ, փադիշահ՝ 31 համատեքստ, 17 տեքստ, ֆառաշ՝ 4 համատեքստ, 3 տեքստ (բերված են բառերի միայն ուղիղ ձևերը):

Եզրակացություն

Հատկական փոխառությունները սովորաբար տվյալ երկրին, ժողովրդին բնորոշ բառեր են՝ իրույթներ, որ փոխառվում են՝ տվյալ ժողովրդի մտածողության, մշակույթի, կենցաղի յուրահատկությունները նշելու համար: Իրանական ժողովուրդների հետ հայերի կապը շատ սերտ է եղել, որ գնում է դեպի դարերի խորքը: Բնականաբար, շատ բառեր, հատկապես պետական կառավարման մարմինների, կոչումների անվանումներն ընդհանուր են եղել, քանի որ վարչատարածքային անվանումներն ընդհանուր էին երկու երկրների համար պարսկական տիրապետության ժամանակ, որ տևել է բավականին երկար ժամանակ:

Ինչպես բոլոր բառերը, այնպես էլ հատկական փոխառություններն իրենց կենսագրությունն ունեն: Որոշ բառեր յուրացվում են փոխառու ժողովրդի կողմից, դառնում նրա բառապաշարի անբաժան մասը, մի մասն էլ կա՛մ իմաստափոխվում, ձեռք է բերում իմաստային նրբերանգներ, կա՛մ դառնում է միջազգային բառապաշարի մաս:

Դիտարկված բառերի մի մասը հայերենում արդեն յուրացված փոխառություն է՝ *բդեշխ, միրզա, մարզպան, սեպուհ, սարդար* և այլն, մյուս մասը համեմատաբար քիչ է հանդիպում՝ *խոջա, շահնա, շահնշահ, փադիշահ* և այլն: Շահիդ բառով այժմ անվանում են մահապարտ-ահաբեկիչներին:

СИЛЬВА ПАПИКЯН – *Наблюдения за некоторыми экзотизмами семантической группы «форма обращения – звание – титул» иранского происхождения.* – В армянской лингвистике исследованию экзотизмов уделено мало внимания. Их также называют *инородными словами, иностранными словами, экзотизмами*. Экзотизмами обычно пользуются при отсылке к явлениям (реалиям), характерным для того или иного народа, относящимся к его истории, географии, обычаям. Они встречаются главным образом в переводной литературе, прессе или в произведениях, посвященных данному народу: исторических трудах, учебниках и т. д. Эти заимствования можно классифицировать по различным характеристикам – происхождению, семантическим группам, частоте, времени и т. д. Среди экзотизмов, проникших в армянский язык значительное количество составляют слова семантической группы «форма обращения – звание – титул» заимствованных из разных языков – русского, турецкого, иранских, арабского и европейских. В статье впервые рассматриваются перешедшие из иранских языков в армянский заимствованные слова семантической группы «форма обращения – звание – титул», имеющие определенную частоту употребления.

Ключевые слова: *экзотизм, реалия, переводческая литература, иранские языки, интернациональные слова*

SILVA PAPIKYAN – *Observations on Some Exoticisms of Iranian Origin in the Semantic Group "Form of Address – Rank – Title".* – Little attention has been paid to the study of specific borrowings in Armenian linguistics. They are also called foreign words, loanwords, or exoticisms. Exoticisms are usually used when referring to phenomena (realia) characteristic of a particular people, relating to its history, geography, and customs. They are found mainly in translated literature, the press, or in works dedicated to that nation - historical works, textbooks, etc. These borrowings can be classified according to various characteristics – origin, semantic groups, frequency, time, etc. Among the exoticisms that have penetrated the Armenian language, a significant number are words from the semantic group "form of address - rank - title" borrowed from various languages - Russian, Turkish, Iranian, Arabic and European. The article examines for the first time the borrowed words of the semantic group "form of address - rank - title" that passed from Iranian languages into Armenian and have a certain frequency of use.

Key words: *exoticism, realia, translated literature, Iranian languages, international words*

Էթիկայի վերաբերյալ հայտարարություն
Հեղինակը հաստատում է, որ պահպանվել են հետազոտությանը վերաբերող էթիկական բոլոր պահանջները:

Շահերի բախման վերաբերյալ հայտարարություն
Հեղինակը հաստատում է, որ շահերի բախում առկա չէ:

Գրականության ցանկ / References

«Արևակ» արևելահայերենի կորպուս [*Arevak* arevelahayereni korpus. http://www.eanc.net/EANC/search/?interface_language=am]:

Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևանի համալսարանի հրատ., Եր. , 1984 [Aghayan Ed., Yndhanur ev haykakan baragitutʿun, Yerevani hamalsarani hrat., Yer., 1984] (in Armenian):

Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., Եր., 1976 [Aghayan Ed., Ardi hayereni batctrakan bararan, «Hayastan» hrat., Yer., 1976 (in Armenian)]:

Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, Երևանի համալսարանի հրատ., հ. 3, Եր., 1977 [Acharyan H., Hayeren armatakan bararan, Yerevani hamalsarani hrat., 3, Yer., 1977] (in Armenian):

Ավետիսյան Յու., Թելյան Լ., Սարգսյան Լ., Ավետիսյան Լ. , Հայոց լեզվի ուղեցույց, ԵՊՀ հրատ., Եր., 2017 [Avetisyan Yu., Telyan L. Sargsyan L., Avetisyan L., Hajotc lezvi ughetcuytc, YPH hrat., 2017] (in Armenian):

Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, «Հայաստան» հրատ., Եր., 1971 [Egishe,Vardani ev hayotc paterazmi masin, «Hayastan» hrat., Yer., 1971] (in Armenian):

Խլղաթյան Ֆ., Ժամանակակից հայոց լեզու, «Զանգակ» հրատ., Եր., 1987 [Khlghatyan F., Zhamanakakitc hayotc lezu, «Zangak-97» hrat.,Yer., 2009] (in Armenian):

Խորենացի Մովսես, Հայոց պատմություն, Երևանի համալսարանի հրատ., Եր., 1981 [Khorenaci Movses, Hayotc patmuťyun, Yerevani hamalsarani hrat., Yer.,1981] (in Armenian):

Հայկական սովետական հանրագիտարան, ՀՍՍՌ պետհրատ, հ. 2, Եր., 1976 [Haykakan sovetakan hanragitaran, HSSR pethrat., h.2, 1976, 7, 1981] (in Armenian):

Հայոց լեզվի բարբառային բառարան, «Գիտություն» հրատ., հ. 3, Եր., 2004 [Hayotc lezvi barbarayin bararan, «Gituťyun» hrat., h 3, Yer., 2004] (in Armenian):

Հայրապետյան Ա., Օտար բառերի բառարան, Եր., հեղինակային հրատ., 2011 [Hayrapetyan A., Otar bareri bararan, Heghinakayin hrat., Yer., 2011] (in Armenian):

Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, ՀՍՍՌ պետհրատ, Եր., 1944-45 թթ. [Malkhaseantc S., Hayeren batcatrakan bararan, HSSR pethrat., Yer., 1944-1945] (in Armenian):

Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Եր. համալսարանի հրատ., Եր., 1993 [Margaryan A., Zhamanakakitc hayotc lezu, Yerevani hamalsarani hrat., Yer., 1993 (in Armenian):

Գյանջևի Նիզամի, Լեյլի և Մեջնուն, Եր., 1947 [Gyanjievi Nizami, Leyli yv Mejnun, Yer., 1947] (in Armenian):

Պապիկյան Ս., Դիտարկումներ «հատկական փոխառություն» տերմինի մասին, «Բառագիտության արդի խնդիրներ» (հանրապետական գիտաժողով), Եր., 2025, էջ 89-95 [Papikyan S., Ditarkumner *hatkakan pʿokharutʿyun* termini masin, Baragituťyan ardi khndirner (hanrapetakan gitazhoghov), Yer., 2025, ej 89-95] (in Armenian):

Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, «Հայաստան» հրատ., Եր., 1987 [Petrosyan H., Hayerenagitakan bararan, «Hayastan» hrat., Yer., 1987 (in Armenian):

Абаев В., О принципах этимологического словаря, Вопросы языкознания, 1952, № 5 [Abaev V.I, O printcipach etimologicheskogo slovarya. Voprosi yazikoznaniya, 1952, № 5, s. 56-69] (in Russian).

Адонц Н., Армения в эпоху Юстиниана: Политическое состояние на основе нахарарскаго строя. СПб., типография Императорской Академии Наук, 1908 [Adontc N., Armenia v epokhu Yustiniana: Politicheskoe sostoyanie na osnsove nakhararskogo stroya. Sankt-Peterburg, tipografiya Impertorskoy Akademi nauk, 1908] (in Russian).